

**ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Վ. Բախշյանի անվան N 2 հիմնական դպրոց»  
ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝  
հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. հունվարի 4-ից հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «Արմավիրի Վ. Բախշյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. փետրվարի 9-ին՝ ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Վ. Բախշյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Հանրապետության 26:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ **093262664**, էլ. փոստ՝ **armavirn2@mail.ru**: